ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՑԱՆՑԱՅԻՆ, ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ (ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԻՍՊԵՏՉԵՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ) ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ՄԱԾՁԲ-2025/22

ք. Երևան «15» 7 2025թ.

Առողջապահության նախարարությունը, ի դեմս Վ. Գրիգորյանի, որը գործում է առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լոկատոր» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է ՓԲ ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի համակարգչային ծրագրային փաթեթների (կենտրոնական դիսպետչերական ղեկավարման համակարգչային համակարգի) սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը** (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **26,280,000 (քսանվեց միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **16** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Առողջապահության նախարարություն	«Լոկատոր» ՓԲԸ
Կառավարական տուն 3	Ք.Երևան, Կոմիտաս 36ա-22
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
900011018885	16600206561200
02507171	00095651
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«15» 7 2025թ. կնքված
ՀՀ ԱՆ ՄԱԾՁԲ-2025/22 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Նախատեսվում է մատուցել 2025-2026թթ.	
						հասցեն	ժամկետը
1	**72261160**	Բժշկական հաստատությունների քանակը՝ առավելագույնը 150 Օգտվող աշխատակիցների քանակը՝ առավելագույնը ՝ 700 **Կենտրոնական դիսպետչերական ղեկավարման համակարգչային համակարգի սպասարկումը ներառում է՝** 1. Սերվերի սպասարկում 2. Web ծրագրային համակարգի սպասարկում 3. Համակարգերի ինտեգրման ապահովում 4. 7/24 հասանելի հեռախոսահամար՝ համակարգի կրիտիկական խափանումների մասին սպասարկողին տեղեկացնելու նպատակով (պատասխանատու ստորաբաժանման պատասխանատու անձանց միջոցով՝ ոչ ավել քան 3 պատասխանատու անձ) 5. Հայտնաբերված թերությունների ուղղում **1. Սերվերի սպասարկում** 1.1 <u>Ընթացիկ աշխատանքներ՝ անխափան աշխատունակության ապահովման նպատակով</u> - Օպերացիոն համակարգի, նրա կոմպոնենտների և	դրամ	26,280,000	1	Ք. Երևան, Կառավարական 3 շենք	Նախատեսվում է մատուցել 2025-2026թթ.

		սպասարկող ծրագրերի պարբերական թարմացում - Սերվերի կառավարում - Սերվերի աշխատանքային պարամետրերի մոնիթորինգ 1.2 <u>Անվտանգության ապահովում</u> - Օպերացիոն համակարգի, նրա կոմպոնենտների և սպասարկող ծրագրերի պարբերական թարմացումների իրականացում՝ անվտանգության ապահովման նպատակով - Չարտոնված մուտքերի փորձերի մոնիթորինգ - Պարբերաբար իրականացվող անվտանգության աուդիտ 1.3 <u>Արխիվացում</u> - Տվյալների հենքի եռամսյակային արխիվացում **2. Web համակարգի ծրագրային ապահովման սպասարկում** Web համակարգի ծրագրային ապահովման սպասարկումը ներառում է ծրագրի ֆունկցիաների անխափան աշխատանքի ապահովում: Ծրագրային ապահովումը պետք է թույլ տա էլեկտրոնային եղանակով իրականացնել 1-03 ծառայության կենտրոնացված կառավարում: Ծրագիրային ապահովումը իր մեջ պետք է ներառի բոլոր անհրաժեշտ ֆունկցիաներն ու ծրագրային գործիքները վերոհիշյալ աշխատանքների իրականացման համար, լինի արագագործ, ունենա օգտագործողին հարմար ինտերֆեյս: Ծրագիրը պետք է ապահովի հետևյալ հիմնական գործառույթները՝ - ՇՕ կայանների բժշկական կենտրոնների տվյալների մուտքագրում - Բնակավայրերի, բրիգադների, անձնակազմի, մեքենաների տվյալների մուտքագրում - Օգտվողներին հաղորդագրություն ուղարկելու հնարավորություն					

		- Թույլատրելի IP միջակայքերի սահմանում - Արձագանքման նորմատիվների սահմանում - Կայանների կարգավիճակի, ստացած կանչերի և բրիգադների կարգավիճակների առցանց մոնիթորինգի հնարավորություն - Յուրաքանչյուր կայանի համար բրիգադների կանչի մեկնելու հերթականության ավտոմատ որոշման հնարավորություն - Առցանց մոնիթորինգի էջերի կարգավորում - Էլ. քարտեզի վրա ՇՕ կայանների տարածքային բաժանումը դիտելու հնարավորություն - Զանգահարողի հեռախոսահամարի ցուցադրում - Կանչի էլ. թերթիկի բացում, լրացում և փոխանցում համապատասխան կայանին և բրիգադին - Բրիգադների կարգավիճակի ցուցադրում ըստ գույների - Կանչի հասցեի մուտքագրման ժամանակ կայանի ավտոմատ ընտրություն - Կանչի հասցեի մուտքագրման ժամանակ հասցեի կոորդինատների ավտոմատ հայտնաբերում և նշում - Կանչի հասցեի կոորդինատները քարտեզի վրա ձեռքով նշելու հնարավորություն - Կանչի համարի և ամսաթիվ/ժամի ավտոմատ գրանցում - Կանչի հրատապության աստիճանի, տեսակի, պատճառի, վայրի/հասցեի, հիվանդի, կանչ տվողի մասին տվյալների մուտքագրում - Հիվանդի ԱԱՀ-ով և սոցիալական ապահովության քարտի համարով բնակչության պետական ռեգիստրում հիվանդի նույնականացում - Կախված կանչի պատճառից հրատապության աստիճանի ավտոմատ ընտրություն - Հեռախոսահամարի ավտոմատ գրանցում կանչի էլ թերթիկում - Ստացված կանչերի ցանկի ցուցադրում,					

		դասակարգված ըստ կարգավիճակների - Ընդունված կանչերին 5 րոպե և ավել բրիգադ չհատկացնելու դեպքում կանչի տողի գույնի փոփոխություն - Կանչի տվյալները մանրամասն դիտելու հնարավորություն - Կանչի վայրը և սպասարկող բրիգադի դիրքը էլ. քարտեզի վրա դիտելու հնարավորություն - Համապատասխան մասնագիտացմամբ մոտակա բժշկական կենտրոնի ցուցադրում - Կանչը ընդհատելու հնարավորություն - Կանչի ընդհատման պատճառը նշելու հնարավորություն - Կանչը այլ կայանի և բրիգադի փոխանցելու հնարավորություն - Կանչի փոխանցումների պատմության պահպանում և ցուցադրում - Կանչը փոխանցողների նույնականացում - Բրիգադը կանչի վայր ժամանած լինելու դեպքում կանչի տողի գունային նշում - Կանչերի ցանկի դիտում առանձնացված ցանկերով, Երևան, Մարզեր, Բոլորը - Կատարված կանչերի էլ. մատյանի ավտոմատ լրացում և ցանկի ցուցադրում - Կանչերի ֆիլտրման հնարավորություն, ըստ բոլոր տվյալների ▪ Համար ▪ Ամս./ժամ ▪ Հիվանդի ԱԱՀ ▪ Հիվանդի տարիք ▪ Կանչի հասցե/վայր ▪ Կանչի կարգավիճակ ▪ Կայան ▪ Կանչի պատճառ ▪ Մնացած բոլոր տվյալները					

		- Կանչը սպասարկած բրիգադի հետագծի դիտման հնարավորություն - Կանչի թերթիկում կատարված փոփոխությունների պատմության ցուցադրում - Կանչի թերթիկի մանրամասն տվյալների դիտման հնարավորություն - Արձագանքման ժամանակի և նորմատիվների ավտոմատ համեմատում կանչի կատարման յուրաքանչյուր օղակում և excel ֆորմատով արտահանում ըստ՝ ▪ Կանչը ընդունելու պահից ենթակայանին փոխանցելու տևողություն ▪ Կանչը ստանալու պահից բրիգադին հանձնելու տևողություն ▪ Կանչը ստանալու պահից բրիգադի մեկնելու տևողությունը ▪ Կանչը ենթակայան փոխանցելու պահից բրիգադի մեկնելու տևողությունը ▪ Կանչը ստանալու պահից բրիգադի տեղ հասնելու տևողությունը ▪ Կանչը բրիգադին փոխանցելու պահից բրիգադի տեղ հասնելու տևողությունը - 1-03 դիսպետչերների գնահատման ցուցանիշների ավտոմատ ամսական հաշվարկ ըստ հետևյալ չափանիշների՝ ▪ Ընդունած կանչերի քանակ ▪ cito կանչերի քանակ ▪ cito կանչերի տոկոս ▪ Կանչ ընդունելու միջին տևողություն ▪ cito կանչ ընդունելու միջին					

		տևողություն ▪ Նորմատիվներից շեղված կանչերի քանակ ▪ Նորմատիվներից շեղված cito կանչերի քանակ ▪ Նորմատիվներից շեղված կանչերի տոկոս ▪ Նորմատիվներից շեղված cito կանչերի տոկոս - Հոսպիտալացումների ցուցակի ավտոմատ գեներացում, ֆիլտրման հնարավորությամբ - Հոսպիտալացումների ցուցակի excel ֆորմատով արտահանում - Ենթակայան փոխանցված կանչերի ցուցակի դիտում - Ենթակայան փոխանցված կանչերի ընդունում, բրիգադի ընտրություն և տպում - Սպասարկման փուլում գտնվող կանչերի ցուցակի դիտում ըստ կարգավիճակների - Էլ. մատյանի լրացում, ֆիլտրման հնարավորությամբ - Էլ. մատյանից կանչի մանրամասն տվյալները դիտելու և կանչը տպելու հնարավորություն - Բրիգադների հերթապահության գրաֆիկը մուտքագրելու հնարավորություն - Ավարտված կանչերի լրացում, անհրաժեշտ տվյալների մուտքագրման հնարավորությամբ - Լրացված կանչերը eHealth համակարգ ուղարկելու հնարավորություն - Յուրաքանչյուր բրիգադին փոխանցված կանչերի ցանկը և կանչի վայրը քարտեզի վրա պլանշետներից դիտելու հնարավորություն - «Կայանի անձնակազմ մուտքագրող» դերի կողմից իր կայանի անձնակազմի մուտքագրման հնարավորություն և իրավասությունների					

		սահմանման հնարավորություն - Պոլիկլինիկաներ կանչ փոխանցելու հնարավորություն(պոլիկլինիկայի ինտերֆեյս) - և այլ ֆունկցիաներ, որոնք անհրաժեշտ են 1-03 ծառայության աշխատանքի համար **3. Համակարգերի ինտեգրացիաների աշխատունակության ապահովում** Սպասարկողը պետք է ապահովի "Կենտրոնական դիսպետչերական ղեկավարման համակարգչային համակարգի" ինտեգրացիաների աշխատութնակությունը հետևյալ համակարգերի հետ - **Բոլոր ՇՕ կայաններում կիրառվող ավտոտրանսպորտի GPS համակարգերի հետ ինտեգրացիա** Ինտեգրման աշխատանքները ներառում են GPS համակարգից ստացված տվյալների կիրառում համապատասխան ֆունկցիաների աշխատանքի ապահովման համար և հակառակը, մասնավորապես՝ ▪ Բրիգադների աշխարհագրական դիրքի ցուցադրում էլ. քարտեզի վրա ▪ Բրիգադների կարգավիճակի և մասնագիտացման մասին ինֆորմացիայի ցուցադրում ▪ Բրիգադների հետագծի ցուցադրում ▪ Բրիգադների շարժի և տեղակայման վայրի մասին տվյալների կիրառում հաշվետվությունների գեներացման նպատակով ▪ Այլ անհրաժեշտ ֆունկցիաներ - **1-03 ծառայությունում կիրառվող զանգերի**					

		ձայնագրման համակարգի հետ ինտեգրացիա Ինտեգրման աշխատանքները ներառում են զանգերի ձայնագրման համակարգից ստացված տվյալների կիրառում համապատասխան ֆունկցիաների աշխատանքի ապահովման համար և հակառակը, մասնավորապես՝ ▪ Զանգահարողի հեռախոսահամարի ցուցադրում 1-03 դիսպետչերի էջում ▪ Էլ. կանչի թերթիկ բացելուց հեռախոսահամարի ավտոմատ լրացում ▪ և այլ անհրաժեշտ ֆունկցիաներ - **Բնակչության պետական ռեգիստրի հետ ինտեգրում** Ինտեգրման աշխատանքները ներառում են ծրագրի համապատասխան իտերֆեյսներից հիվանդի տվյալներով հարցում կատարելու և անձը իդենտիֆիկացնելու հնարավորություն: Տվյալ ֆոնկցիան պետք է հասանելի լինի 1-03 դիսպետչերի, օպերատորի և հատուկ օգտատերի ինտերֆեյսներից: - **Միասնական առողջապահական էլեկտրոնային համակարգի (eHealth) հետ ինտեգրում** Ինտեգրման աշխատանքները ներառում են՝ ▪ Կենտրոնական դիսպետչերական ղեկավարման համակարգչային համակարգ”-ից eHealth համակարգի օգտանուն և գաղտնաբառի միջոցով նույնականացում ▪ “Կենտրոնական դիսպետչերական ղեկավարման համակարգչային համակարգ”-ում					

			բացված էլ. կանչի թերթիկների ավտոմատ գրանցում eHealth համակարգում: ▪ Բժշկական կենտրոնների համապատասխան բաժանմունքներում ազատ մահճակալների քանակի ցուցադրում և փոփոխության պահպանում					

* **Պայմանագրի գինը կազմում է 2025-2026 թվականների համար ընդհանուր գինը:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011018885
02507171

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Լոկատոր» ՓԲԸ
Ք.Երևան, Կոմիտաս 36ա-22
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ

16600206561200
00095651

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«15» 7 2025թ. կնքված
ՀՀ ԱՆ ՄԱԾՁԲ-2025/22 ծածկագրով պայմանագրի

ՀՀ դրամ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160	***ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ***	2,190,000	2,190,000	5,475,000	5,475,000	5,475,000	7,665,000	7,665,000	7,665,000	13,140,000	13,140,000	13,140,000	13,140,000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011018885
02507171

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Լոկատոր» ՓԲԸ
Ք.Երևան, Կոմիտաս 36ա-22
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ

16600206561200
00095651

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն